ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/4

ք. Երևան 14.08.2017թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Մնացականյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է՝ սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 2017 թ. նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակում կատարվող աշխատանքների համար կատարման վերջնաժամկետ է սահմանվում 15.11.2017 թ.:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե Աշխատանքի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սույն պայմանագրի N 4.2 Հավելվածով սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության (Հավելված N 4) ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 20 օրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կարգով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:

4.7 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող

պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 1 239 000 000 (մեկ միլիարդ երկու հարյուր երեսունինը միլիոն, այսուհետև՝ պայմանագրի ընդհանուր գումար) ՀՀ դրամ, որից՝ 206500000 (երկու հարյուր վեց միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Սույն պայմանագրի 1.3 կետով սահմանված ժամկետում Կապալառուի կողմից N 1.1 հավելվածով նախատեսված՝ նախագծանախահաշվային փաստաթղթերին համապատասխան իրականացվելիք աշխատանքների դիմաց վճարման ենթակա գումարը կազմում է 39177200 (երեսունինը միլիոն հարյուր յոթանասունյոթ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ (այսուհետև՝ պայմանագրային գումար), որից՝ 6529533 (վեց միլիոն հինգ հարյուր քսանինը հազար հինգ հարյուր երեսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

Պայմանագրի ընդհանուր գնի և պայմանագրային գումարի միջև տարբերության չափով աշխատանքները կկատարվեն դրանց համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Աշխատանքի կատարման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:

5.1.2 Կողմերի միջև փոխադարձ համաձայնեցված կարգով՝ վերոհիշյալ համաձայնագրով կարող է նախատեսվել կանխավճար:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով՝ անկանխիկ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 20.12.2017թ.՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.5 Սույն պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի տեսակի սահմանված միավոր գինն է.

ՎԳՏ - ծավալաթերթ-նախահաշվով սահմանված առանձին տեսակների (տողերի) դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.5 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով

սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.7 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կապալառուի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.8 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.10 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 4, N 4.1 և N 4.2 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.11 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի ր ա տ ու՝

ՀՀ կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012599
ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի պետ՝

_____ Ա. Ղարիբյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Կ ա պ ա լ ա ռ ո ւ՝

<<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ
ք. Գավառ, Անդրանիկի 5
<<Արմսվիսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2500010066920100
ՀՎՀՀ 08404037

Տնօրեն՝

_____ Ա. Ղազարյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
14.08.2017 թ. կնքված աշխատանքների կատարման
N «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/4» գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Պայմանագրի N1.1 հավելվածով նախատեսված աշխատանքների,
փուլերի և ծավալների կատարման

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Քանդման և հողային աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	30.08.2017
2	Խարսխապատեր	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	10.09.2017
3	Միածույլ ե/ բետոնյա պարզունակներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	20.09.2017
4	Միածույլ ե/ բետոնյա միջուկներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	20.09.2017
5	Ե/բետոնյա սյուների ուժեղացում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	30.09.2017
6	Միածույլ ե/ բետոնյա պարզունակների ուժեղացում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	30.09.2017
7	Միածույլ ե/բետոնե դիաֆրագմաների պատեր	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	25.10.2017
8	Միածույլ ե/ բետոնյա գոտիներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	25.10.2017
9	Միածույլ երկաթ բետոնյա ծածկի սալեր	Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը	**15.11.2017**

Պ ա տ վ ի ր ա տ ու՝
ՀՀ կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012599
ՀՎՀՀ 02565827

Աշխատանքների ընդունման

Ս.Կրտչյան

Կ.Տ.

Կ ա պ ա լ ա ռ ու՝

<<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ
ք. Գավառ, Անդրանիկի 5
<<Արմսվիսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2500010066920100
ՀՎՀՀ 08404037

Տնօրեն՝

(ստորագրություն)

Ա.Գրիգորյան

Հավելված N 3
14 . 08.2017թ. կնքված աշխատանքների կատարման
N «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/4» գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

(բաժին 09, խումբ 06, դաս 01, ծրագիր 03)

ՀՀ դրամ

N	Աշխատանքների անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում											
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի մարզադահլիճի վերակառուցում	-	-	-	-	-	-	-	24485000	24485000	39177200	39177200	39177200	**39177200**

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամողական կարգով*

Պ ա տ վ ի ր ա տ ու՝
ՀՀ կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012599
ՀՎՀՀ 02565827

Կ ա պ ա լ ա ռ ու՝
<<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ
ք. Գավառ, Անդրանիկի 5
<<Արմսվիսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2500010066920100
ՀՎՀՀ 08404037

Աշխատակազմի ղեկավար՝ Տնօրեն՝

Ա. Ավետիսյան Մ. Մնացականյան

Կ.Տ. Կ.Տ.

Հավելված N 4
14.08.2017 թ. կնքված աշխատանքների կատարման
N «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/4» գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ սփորն նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

Կատարված աշխատանքի							
անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
		ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց՝	Աշխատանքն ընդունեց՝
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 4.1
14. 08.2017թ. կնքված աշխատանքների կատարման
N «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/4» գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. -------- -ին կնքված N ----------
(Կապալառուի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց՝
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/4

(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան /4 .08.2017թ.

<<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Մնացականյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ընկերությունը մասնակցում է Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/4» ծածկագրով բաց գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքված պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Ընկերության անվանումը՝	<<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ
Հասցեն՝	ք. Գավառ, Անդրանիկի 5
Սպասարկող բանկի անվանումը	<<Արմսվիսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ	2500010066920100
ՀՎՀՀ	08404037

տնօրեն ---------- Հ. Մնացականյան
(ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝ ---------- Հ. Խաչատրյան
(ստորագրություն)

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ N**

(պայմանագրի կատարման ապահովում)

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ <<Թիվ 1Շինվարչություն>> ԲԲԸ

4. Վճարողի բանկը՝ <<Արմսվիսբանկ>> ՓԲԸ

5. Վճարողի հաշվի համարը՝ 2500010066920100

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 08404037

7. Վճարողի ՀՇՀ՝

8. Շահառու՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 02565827

10.Շահառուի բանկը՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

11.Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 900005000758

12.Գումարը թվերով և բառերով՝ 123900000 (հարյուր քսաներեք միլիոն ինը հարյուր հազար)

13.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

14.Գործարքի /վճարման/ նպատակը՝ պայմանագրի ապահովում՝ տուժանքի ձևով

15.Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/1»

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից՝--- էջ

19.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 19.բ. Կ.Տ.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 18.բ. Կ.Տ.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.Տ. "___" ___ 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.Տ. 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

Հավելված N 4.2
14. 08.2017թ.
կնքված աշխատանքների կատարման
N «ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/4» գնման պայմանագրի

Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջներ

ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի մարզադահլիճի վերակառուցման շինարարության աշխատանքները պետք է կատարվեն Հայաստանի Հանրապետությունում գործող շինարարական նորմերին ու ստանդարտներին համապատասխան: Շինարարական աշխատանքներն ավարտելուց և սահմանված կարգով ընդունելուց հետո Կապալի օբյեկտի՝ ներառյալ դրա առանձին մասերի և օգտագործված նյութերի, երաշխիքային ժամկետ սահմանել 365 օր:

Պ ա տ վ ի ր ա տ ու՝
ՀՀ կառավարության առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3՝
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012599
ՀՎՀՀ 02565827

Կ ա պ ա լ ա ռ ո ւ՝
<<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ
ք. Գավառ, Անդրանիկի 5
<<Արմսվիսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2500010066920100
ՀՎՀՀ 08404037

Աշխատակազմի ղեկավար՝

_____ Ա. Ստեփանյան

Կ.Տ.

Տնօրեն՝

_____ Հ. Սնացականյան

Կ.Տ.

Հավելված N1
14. 08.2017թ. կնքված աշխատանքների կատարման
N ՀՀ ՔՊԿ-ԲՀԱՇՁԲ-17/4ե գնման պայմանագրի

ՀՀ Լոռու մարզի ք.Վանաձորի գյուղատնտեսական քոլեջի վերակառուցում

ՕԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ

h/h	Հիմնա-վորում	Աշխատանքների անվանումը	Չափ, միավ	Քանակ	միավորի ընդհանուր առժեքը հազ.դր	ընդհանուր առժեքը հազ.դր
1	2	3	4	5		17
		Շինարարական աշխատանքներ				
		Քանդման և հողային աշխատանքներ				
1	23-159	Տանիքի ասբոշիֆերային ծածկի քանդում	100 քմ	14.1	19.76	278.57
2	8-188	Թիթեղյա ջրհորդանների, և առանձին քիվերի քանդում 0,7մ լայնությամբ	100 մ	2.73	24.48	66.82
3	8-300 գ=0,8	Տանիքի փայտյա ծպեղնատորի և կավարամածի քանդում	խմ	65.75	24.29	1596.82
4	8-186	Տանիքի ջրթող խողովակների և ձևավոր մասերի ապամոնտաժում	100 մ	1.52	10.02	15.23
5	8-287 գ=0,5	Նույնի տաքացուցիչ շերտը որպես շիճ աղբ	խմ	149.9	2.68	401.64
6	8-24	Տանիքի Ձեղնալուսամուտների - քանդում	հտ	9	2.40	21.63
7	23-156	Տանիքի փափուկ ծածկի ,ռուբերոյիդ, քանդում	100 քմ	0	17.64	0.00
8	8-287 գ=0,8	Նույնի հարդեցուցիչ շերտը խառամ-բետոնից	խմ	0	11.85	0.00
9	8-282 գ=0,6	Պարապետային մետաղական ճաղերի ապամոնտաժում	մ	40	0.07	2.78
10	23-172	Փայտյա պատուհանների և գոգերի ապամոնտաժում	քմ	773.34	1.97	1526.35
11	23-174	Փայտյա դռների ապամոնտաժում	քմ	365.2	1.16	425.17
12	6-39 գ=0,8	Բացվացքների ապակե բլոկներից շարվածքի քանդում	քմ	0	1.38	0.00
13	25-1 0,6,0,7	Մետաղական ճաղավանդակների ապամոնտաժում	քմ	518.4	3.94	2043.63
14	25-1 0,6,0,7	Մետաղական դարպասների ապամոնտաժում	քմ	7.8	3.94	30.75
15	23-151	Պեմզոսալերից, միջնորմերի քանդում - 10սմ հաստությամբ	քմ	2190.8	0.81	1769.31
16	23-150	Փայտյա լամինապատ միջնորմերի քանդում	քմ	397.8	0.41	164.09
17	13-144 գ=0,8	Պատերի լամինապատ մակերեսների քանդում	քմ	345.5	1.13	388.93
18	23-147	Սիաձույլ երկաթբետոնյա կոնստրուկցիաների քանդում	խմ	0	23.32	0.00
19	7-490 գ=0,8	Հավաքովի ե/բետոնյա ծածկի սալերի ապամոնտաժում	հատ	18	5.95	107.11
20	7-177	Հավաքովի ե/բետոնյա ծածկի կողավոր	հատ	0.0	6.18	0.00

	գ=0,8	6x1,5մ սալերի ապամոնտաժում				
21	7-150 գ=0,8	Հավաքովի ե/բետոնյա L =18 մ ֆերմաների ապամոնտաժում	հատ	0.0	12862.55	0.00
22	23-142	Պատի տուֆե /միդիս/ շարվածքի քանդում	խմ	0	11.95	0.00
23	23-103	Բացվացքների բացում քարե պատերի մեջ	խմ	53.25	19.48	1037.22
24	23-122 23-123	Բացվածքների քարե շեպերի տաշում 10-12սմ խորությամբ	քմ	381.88	5.00	1910.20
25	23-142	Պատի տուֆե սրբատաշ շարվածքի քանդում	խմ	0	11.95	0.00
26	23-143	Պեմզոբլոկներից պատերի շարվացքի քանդում	խմ	0	7.81	0.00
27	23-140	Բետոնե հիմքերի քանդում	խմ	49.9	42.60	2125.80
28	23-147	Միածույլ երկաթբետոնյա հովհարի քանդում	խմ	0.45	23.32	10.50
29	13-5	Պատերի հախճասալերի քանդում	քմ	58.6	0.58	33.88
30	11-229	Առաստաղի գաջե սվաղի քանդում	քմ	3735	0.98	3671.41
31	11-225	Պատերից գաջե սվաղի քանդում	քմ	2066.61	0.75	1553.44
32	23-169 23-170	Բետոնե խճազարդ հատակների քանդում 40մմ	քմ	267.4	0.53	140.45
33	23-164	Հատակի մանրատախտակյա ծածկի և շրիշակների քանդում	քմ	2481.2	0.54	1336.69
34	23-166	Կերամիկական սալիկներից հատակի ծածկերի քանդում	քմ	73.0	0.42	30.39
35	23-163 5-3	Փայտյա հատակների ծածկի և տափագերանների քանդում	քմ	151.0	0.53	80.67
36	10-28 գ=0,8	Բեմի փայտյա կմախքի քանդում	խմ	1.5	18.85	28.28
37	23-163 5-3	Բեմի փայտյա հատակների ծածկի և տափագերանների քանդում	քմ	24.0	0.53	12.82
38	23-181	բազալտե սալահատակ ծածկի քանդում	քմ	114.2	3.91	446.82
39	23-181	Աստիճանների երեսապատ բազալտե սալերի քանդում	քմ	73.5	3.91	287.58
40	9-26	Մետաղական բազրիքների և բռնակների ապամոնտաժում	մ	52.2	0.45	23.64
41	23-160	Բետոնյա և ցեմենտյա հարդեցուցիչ շերտերի քանդում	խմ	295.4	15.90	4697.68
42	46-139	Գոյություն ունեցող միջանցքի և սպորտային մասնաշենքի աստիճանա- վանդակի նախամուտքի քանդում մինչև 1000 խմ ծավալով	խմ	738.9	4.26	3147.69
43	23-77	Շին աղբի հավաքում և տեղափո- խում բարձելու համար /մասնակի/	տն	361.7	1.56	564.68
44	գնաց-3 1մ,տր	Շին աղբի բարձում եվ տեղափոխում 7 կմ վրա	տն	1652.32	2.51	4140.68
44	գնաց-3 1մ,տր	Ե/բ կոնստրուկցիաների բարձում եվ տեղափոխում 7 կմ վրա	տն	235.0	4.72	1109.79
44	գնաց-3 1մ,տր	Փայտյա կոնստրուկցիաների բարձում և տեղափոխում 7 կմ վրա	տն	110.4	6.30	695.87 0.00
		Ընդամենը				**35925.05**
		հողային աշխատանքներ				
1	1-1593	3 -րդ կարգի հողի փորում էքսկավ, 0,5 խմ բարձելով մինչև 2մ գոյություն ունեցող պատերից 210,8x1,2	100խմ	2.25	75.05	168.86
2	1-1551	4 -րդ կարգի հողի փորում էքսկավ, 0,5 խմ կողլիցք մինչև 2մ գոյություն ունեցող պատերից 172,87x1,2	100խմ	1.16	61.55	71.40

3	1-961	3-րդ կարգի հող ի փորում ձերքով խրամուղում մեխանիղմի աշխատանքից հետո 1,1x1,2	խմ	5.4	2.54	13.74
4	1-8	3,4 կարգի հողի փորում հիմքերի ուժեղացման դեպքում	խմ	0	4.78	0.00
5	1-1634	3 -րդ կարգի տեղի հողի ետլիցք բուլդոզերով	100 խմ	0.95	5.87	5.58
6	1-1185	3րդ կարգի հողի ետլիցքի տոփանում	100 խմ	0.95	26.41	25.09
7	1-1969	Հողի ետլիցք հիմքերի կառուցումից հետո,ձեռքով և տոփանում	խմ	21.4	0.89	18.97
8	գնաց-3 1մ,տր	Ավելացած գրունտի տեղափոխում 7 կմ 685x1,8	տն	419	1.74	726.97
9	1-1606	2-3 կարգի հողի հարթեցում թափոնա-տեղում մեխանիզմով	1000 խմ	0.685	38.75	26.54
10	1-8	3-4 կարգի հողի փորում հիմքերի ուժեղացման դեպքում թիվ 1 մասնաշենքի համար	խմ	879.6	4.78	4204.45
11	գնաց-3 1մ,տր	Ավելացած գրունտի բարձում և տեղափոխում 7 կմ 447,5x1,8	տն	805.5	2.51	2018.57
12	1-1606	2-3 կարգի հողի հարթեցում թափոնա-տեղում մեխանիզմով	1000 խմ	0.447	38.75	17.32
13	1-201	Հողի ետլիցք ուժեղացումից հետո և տոփանում	խմ	432.1	1.08	466.38
14	1-8	3-4 կարգի հողի փորում հիմքերի ուժեղացման դեպքում թիվ 2 մասնաշենքի համար	խմ	404.2	4.78	1932.06
15	գնաց-3 1մ,տր	Ավելացած գրունտի բարձում և տեղափոխում 7 կմ 199,1x1,8	տն	358.38	2.51	898.09
16	1-1606	2-3 կարգի հողի հարթեցում թափոնա-տեղում մեխանիզմով	1000 խմ	0.199	38.75	7.71
17	1-201	Հողի ետլիցք ուժեղացումից հետո և տոփանում	խմ	205.1	1.08	221.37
						0.00
		Ընդամենը				10823.1
		Միաձույլ ե/բետոնյա կոնստրուկցիաներ				
		Կցակառույց և սպորտային մասնաշենք				
1	6-1 գ=1,15 գ=1,25	B 7,5 դասի բետոնից նախապատ-րաստական շերտ հիմքերի տակ գոյություն ունեցող շենքում	խմ	0.00	33.47	0.00
2	6-21 գ=1,15 գ=1,25	Քարաբետոն ժապ.հիմքերի տակ B 7,5 բետոնից գոյություն ունեցող շենքի պայմաններում	խմ	0.0	36.73	0.0
3	6-22 գ=1,15 գ=1,25	Միաձույլ ե/բետոնե B 25 դասի բետո-նից հիմքեր պատերի համար գոյություն ունեցող շենքում	խմ	127.07	57.51	7307.96
4	հ,բ	Ամրան Ա c -1	տն	2.502	437.48	1094.56
5	հ,բ	Ամրան Ա -500c Φ=12մմ	տն	0.09	427.76	38.50
6	հ,բ	Ամրան Ա -500c Φ=14-18 մմ	տն	2.238	427.76	957.32
7	հ,բ	Ամրան Ա -500c Φ=20-25 մմ	տն	0.266	427.76	113.78
8	6-91 գ=1,15 գ=1,25	Խարսխապատեր քարաբետոնյա 20դասի բետոնից	խմ	10.8	38.87	419.76
9	23-79	Գոյություն ունեցող ե/բետոնյա սյուների ուժեղացում միաձույլ երկաթ բետոնյա շապիկով B25	խմ	25.56	363.74	9297.29
10	հ,բ	Ամրան Ա c -1	տն	0.000	437.48	0.00
11	հ,բ	Ամրան Ա -500c Φ=25-28 մմ	տն	0	427.76	0.00
12	6-145 գ=1,15 գ=1,25	Միաձույլ ե/բետոնե դիաֆրագմանե-րի պատեր B 25 դասի բետոնից 20սմ հաստությամբ գոյություն ունեցող շենքի պայմաններում	խմ	30.4	96.90	2945.80

13	6-146 գ=1,15 գ=1,25	Միաձույլ ե/բետոնե դիաֆրագմաների պատեր B 25 դասի բետոնից 30սմ հաստությամբ գոյություն ունեցող շենքի պայմաններում	խմ	80.91	80.21	6489.61
14	հ,բ	Ամրան Ա c -1	տն	0.0410	437.48	17.94
15	հ,բ	Ամրան Ա -500c Φ=8 մմ	տն	1.534	437.48	671.09
16	հ,բ	Ամրան Ա -500c Φ=10մմ	տն	2.502	435.85	1090.51
17	հ,բ	Ամրան Ա -500c Φ=12 մմ	տն	1.205	427.76	515.45
18	հ,բ	Ամրան Ա -500c Φ=16 մմ	տն	1.681	427.76	719.06
19	6-109 գ=1,15 գ=1,25	Միաձույլ երկաթ բետոնյա սյուներ B 25 բետոնից գոյություն ունեցող շենքի պայմաններում	խմ	34.80	106.87	3718.93
20	հ.բ	Ամրան Ա c -1	տն	1.060	437.48	463.72
21	հ.բ	Ամրան Ա -500c Φ=20-28մմ	տն	5.86	427.76	2506.66
22	6-161 գ=1,15 գ=1,25	Միաձույլ երկ/ բետոնյա B25 բետոնից պարզունակներ գոյություն ունեցող շենքի պայմաններում	խմ	83.52	86.95	7261.68
23	հ,բ	Ամրան Ա c -1	տն	3.231	437.48	1413.48
24	հ,բ	Ամրան Ա -500c Φ=14-16 մմ	տն	2.248	427.76	961.60
25	հ,բ	Ամրան Ա -500c Φ=18-20 մմ	տն	2.772	427.76	1185.74
26	հ,բ	Ամրան Ա -500c Φ=20-28 մմ	տն	2.053	427.76	878.19
27	6-106 գ=1,15 գ=1,25	Միաձույլ երկաթ բետոնյա միջուկներ B 25 բետոնից գոյություն ունեցող շենքի պայմաններում	խմ	14.44	97.46	1407.32
28	հ.բ	Ամրան Ա c -1	տն	0.375	437.48	164.05
29	հ.բ	Ամրան Ա -500c Φ=6 մմ	տն	0.183	437.48	80.06
30	հ.բ	Ամրան Ա -500c Φ=16-28 մմ	տն	2.078	427.76	888.88
31	6-83	Ներդիրներ մինչև 4 կգ քաշով	տն	0.027	832.18	22.47
32	6-168 գ=1.15 գ=1.25	Միաձույլ երկաթ բետոնյա գոտիներ B25 բետոնից գոյություն ունեցող շենքի պայմաններում	խմ	16.2	70.07	1135.12
33	հ.բ	Ամրան Ա c -1	տն	0.59	437.48	258.11
34	հ.բ	Ամրան Ա -500c Φ=16 մմ	տն	2.457	427.76	1051.00
35	հ.բ	Ամրան Ա -500c Φ=25 մմ	տն	1.849	427.76	790.92
36	6-161 գ=1,15 գ=1,25	Միաձույլ երկ/ բետոնյա B25 բետոնից պարզունակների ուժեղացում	խմ	14.14	86.95	1229.41
37	հ,բ	Ամրան Ա c -1	տն	0.105	437.48	45.93
38	հ,բ	Ամրան Ա -500c Φ=14 մմ	տն	1.077	427.76	460.69
39	հ,բ	Ամրան Ա -500c Φ=28 մմ	տն	0.206	427.76	88.12
40	6-173 գ=1,15 գ=1,25	Միաձույլ երկաթ բետոնյա B-25 ծածկի սալեր մինչր 6մ բաձրության վրա գոյություն ունեցող շենքի պայմաններում	խմ	138.6	70.27	9739.66
41	շուկ	Ամրան Ա c -1	տն	0.383	437.48	167.55
42	շուկ	Ամրան Ա -500c Φ=8 մմ	տն	3.261	437.48	1426.61
43	շուկ	Ամրան Ա -500c Φ=10 մմ	տն	4.623	435.85	2014.95
44	շուկ	Ամրան Ա -500c Φ=14-16 մմ	տն	3.469	427.76	1483.89
45	6-21 գ=1,15 գ=1,25	Քարաբետոն հիմքերի տակ B 15 բետոնից ներսի աստիճանների համար	խմ	5.9	39.00	230.1
46	5-72	Հատակների բետոնյա նախապատրաստական շերտ B20 բետոնից	խմ	49.5	38.17	1889.21
47	6-86	Բետոնյա նախապատրաստական շերտի ամրանավորում մետ,ցանցով	տն	1.659	17.08	28.33
48	հ,բ	Ամրան Ա -500c Φ=8մմ	տն	1.659	437.48	725.77
49	6-177 գ=1,15 գ=1,25	Միաձույլ երկաթ բետոնյա աստիճանամարշեր B 25 բետոնից գոյություն ունեցող շենքի պայմաններում	խմ	4.80	90.29	433.39

50	ի,բ	Ամրան Ա c -1	տն	0.074	437.48	32.37
51	ի,բ	Ամրան Ա -500c Φ=16մմ	տն	0.466	427.76	199.33
		ընդամենը				76061.88
		Թիվ1 ուսումնական մասնաշենք				
1	6-21 գ=1,15 գ=1,25	Քարաբետոն հիմքերի տակ B 10 բետոնից ներսի ժապավենային հիմքերի համար	խմ	56.6	37.69	2134.2
2	6-23 գ=1,15 գ=1,25	Միաձույլ ե/բետոնե B 25 դասի բետոնից ժապավենային հիմքեր 1մ ավել լայնությամբ	խմ	196.09	52.74	10341.22
3	ի,բ	Ամրան Ա c -1	տն	2.901	437.48	1269.11
4	ի,բ	Ամրան Ա -500c Φ=14մմ	տն	1.921	427.76	821.72
5	23-78	Գործություն ունեցող ե/բետոնյա ժապավենային հիմքերի ուժեղացում միաձույլ ե/բետոնյա շապիկով B25	խմ	125.6	167.49	21036.49
6	ի,բ	Ամրան Ա -500c Φ=8 մմ	տն	0.739	437.48	323.29
7	ի,բ	Ամրան Ա -500c Φ=12 մմ	տն	1.232	427.76	527.00
8	ի,բ	Ամրան Ա -500c Φ=14 մմ	տն	2.544	427.76	1088.21
9	23-78	Գործություն ունեցող ե/բետոնյա սյուների հիմքային մասի ուժեղացում միաձույլ ե/բետոնյա շապիկով B25	խմ	60.72	167.49	10169.87
10	ի,բ	Ամրան Ա -500c Φ=8 մմ	տն	0.386	437.48	168.87
11	ի,բ	Ամրան Ա -500c Φ=14 մմ	տն	0.869	427.76	371.72
12	23-79	Գործություն ունեցող ե/բետոնյա սյուների ուժեղացում միաձույլ երկաթ բետոնյա շապիկով B25	խմ	42.4	363.74	15422.74
13	ի,բ	Ամրան Ա c -1	տն	0.535	437.48	234.05
14	ի,բ	Ամրան Ա -500c Φ=8մմ	տն	0.934	437.48	408.60
15	ի,բ	Ամրան Ա -500c Φ=14-16 մմ	տն	1.385	427.76	592.44
16	6-145 գ=1,15 գ=1,25	Միաձույլ ե/բետոնե դիաֆրագմանե-րի պատեր B 25 դասի բետոնից 20սմ հաստությամբ գոյություն ունեցող շենքի պայմաններում	խմ	77.9	96.90	7548.60
17	ի,բ	Ամրան Ա -500c Φ=8մմ	տն	0.102	437.48	44.62
18	ի,բ	Ամրան Ա -500c Φ=14-16 մմ	տն	15.75	427.76	6737.18
19	46-188 46-204	Անցքերի շաղափում ե/բետոնյա կոնստրուկցիաներում գայլակոնիչով Φ=20մմ 400 մմ խորությամբ	100 հատ	4.56	120.25	548.36
20	46-156 46-172	Նույնը Φ=20մմ 600 մմ խորությամբ ծածկերում	100 հատ	2.08	112.23	233.43
21	46-156 46-172	Նույնը Φ=20մմ 150 մմ խորությամբ ծածկերում	100 հատ	11.28	79.27	894.12
22	46-188	Նույնը Φ=20մմ 300 մմ խորությամբ բետոնյա հիմքերում	100 հատ	13.36	103.10	1377.41
23	23-47	Անցքերի շաղափում քարե պատերում գայլակոնիչով 40սմ խորությամբ	100 հատ	19.4	38.41	745.23
24	OOO verakan	Շաղափած անցքերի լցնում պոլիմեր շաղախով	կգ	98.5	4.10	404.07
25	23-80	Պատերի ուժեղացում երկաթ բետոնյա շապիկով B-25 մակնիշի բետոնից	խմ	194.0	133.91	25978.19
26	ի,բ	Ամրան Ա c -1	տն	0.254	437.48	111.12
27	ի,բ	Ամրան Ա -500c Φ=8մմ	տն	0.282	437.48	123.37
28	ի,բ	Ամրան Ա -500c Φ=10մմ	տն	5.01	435.85	2183.63
29	ի,բ	Ամրան Ա -500c Φ=12մմ	տն	8.378	427.76	3583.75
30	26-107 26-111	Պատերի ուժեղացում տերկրետ բետոնով 70մմ հաստությամբ	քմ	618.00	8.13	5023.23
31	15-304	Մետաղական ցանցի և խարսխային ամրանների տեղադրում	100 քմ	6.18	27.27	168.55

32	շուկ	Ամրան 3Вр-1	տն	0.472	605.66	285.87
33	շուկ	Ամրան Ա -500c Φ=8 մմ	տն	0.685	437.48	299.67
34	շուկ	Ամրան Ա -500c Φ=10 մմ	տն	0.716	435.85	312.07
35	23-82	Երկաթ բետոնյա ծածկերի ուժեղա- ցում վերևվից В-25 բետոնից	խմ	154.6	91.03	14073.63
36	հ,բ	Ամրան Ա c -1	տն	7.793	437.48	3409.24
37	23-115 գ=0,4	անցքերի փորում հին ե/բետոնյա ծածկերի մեջ 100x50մմ	100 հտ	34.05	35.98	1225.11
38	6-106 գ=1,15 գ=1,25	Միաձույլ ե/բետոնյա միջուկներ բմ-25 բետոնից	մ3	33.8	98.83	3340.54
39	շուկ	ամրան Ա-1	տն	0.418	437.48	182.86
40	շուկ	Ամրան Ա -500c Φ=16 մմ	տն	1.227	427.76	524.86
		ընդամենը				**144268.28**
		Թիվ1 ուսումնական մասնաշենքի Ը1...Ա4 եվ 6 ..9.առանցքներ				
1	23-94	Միաձույլ ե/ բետոնյա պարզունակների ուժեղացում В25 բետոնով	խմ	12.87	88.46	1138.46
2	հ,բ	Ամրան Ա c -1	տն	0.408	437.48	178.49
3	հ,բ	Ամրան Ա -500c Φ=12 մմ	տն	0.159	427.76	68.01
4	հ,բ	Ամրան Ա -500c Φ=14-16 մմ	տն	0.62	427.76	265.21
5	23-82	Երկաթ բետոնյա ծածկերի ուժեղացում- վերևվից В-25 բետոնից	խմ	14.9	91.03	1356.38
6	հ,բ	Ամրան Ա c -1	տն	0.344	437.48	150.49
7	6-86	Ցեմենտյա հարդեցնող շերտի ամրանավորում մետ,ցանցով	տն	0.15	17.08	2.56
8	հ,բ	Ամրան Ա c -1	տն	0.15	437.48	65.62
9	23-79	Գոյություն ունեցող ե/բետոնյա միջուկների ուժեղացում միաձույլ ե/բետոնյա շապիկով В25	խմ	31.29	363.74	11381.55
10	հ,բ	Ամրան Ա c -1	տն	0.029	437.48	12.69
11	հ,բ	Ամրան Ա -500c Φ=8մմ	տն	0.293	437.48	128.18
12	հ,բ	Ամրան Ա -500c Φ=14-16 մմ	տն	1.174	427.76	502.19
13	6-22 գ=1,15 գ=1,25	Միաձույլ ե/բետոնե В 25 դասի բետո- նից հիմքեր պատերի համար գոյություն ունեցող շենքում	խմ	5.95	57.51	342.19
14	հ,բ	Ամրան Ա c -1	տն	0.068	437.48	29.75
15	հ,բ	Ամրան Ա -500c Φ=12մմ	տն	0.018	427.76	7.70
16	հ,բ	Ամրան Ա -500c Φ=14-18 մմ	տն	0.081	427.76	34.65
17	6-173 գ=1,15 գ=1,25	Միաձույլ երկաթ բետոնյա В-25 ծած- կի սալեր մինչր 6մ բաձրության վրա գոյություն ունեցող շենքի պայման- ներում	խմ	11.45	70.27	804.61
18	շուկ	Ամրան Ա c -1	տն	0.492	437.48	215.24
19	շուկ	Ամրան Ա -500c Φ=10 մմ	տն	0.315	435.85	137.29
20	6-145 գ=1,15 գ=1,25	Միաձույլ ե/բետոնե դիաֆրագմանե- րի պատեր В 25 դասի բետոնից 20սմ հաստությամբ գոյություն ունեցող շենքի պայմաններում	խմ	17.3	96.90	1676.39
21	շուկ	Ամրան Ա c -1	տն	0.126	437.48	55.12
22	շուկ	Ամրան Ա -500c Φ=12մմ	տն	0.376	427.76	160.84
23	շուկ	Ամրան Ա -500c Φ=14-16 մմ	տն	1.269	427.76	542.82
24	շուկ	Ամրան Ա -500c Φ=14-16 մմ	տն	0.154	427.76	65.87
16	6-19 գ=1,15 գ=1,25	Միաձույլ ե/բետոնե վերելակի հորան В 25 դասի բետոնից 20սմ հաստությամբ գոյություն ունեցող շենքի պայմաններում	խմ	1.92	54.95	105.50
41	շուկ	Ամրան Ա c -1	տն	0.02	437.48	8.75

18	հ,բ	Ամրան Ա -500c Փ=14-16 մմ	տն	0.168	427.76	71.86
16	6-145 գ=1,15 գ=1,25	Միաձույլ ե/բետոնե վերելակի պատեր B 25 դասի բետոնից 20սմ հաստությամբ գոյություն ունեցող շենքի պայմաններում	խմ	14.8	96.90	1434.14
41	շուկ	Ամրան Ա -500c Փ=8մմ	տն	0.225	437.48	98.43
42	շուկ	Ամրան Ա -500c Փ=10մմ	տն	0.174	435.85	75.84
43	շուկ	Ամրան Ա -500c Փ=12մմ	տն	0.181	427.76	77.42
44	շուկ	Ամրան Ա -500c Փ=14-16 մմ	տն	0.195	427.76	83.41
45	6-109 գ=1,15 գ=1,25	Միաձույլ երկաթ բետոնյա սյուներ B 25 բետոնից գոյություն ունեցող շենքի պայմաններում	խմ	1.89	106.87	201.98
46	հ.բ	Ամրան Ա c -1	տն	0.066	437.48	28.87
47	հ.բ	Ամրան Ա -500c Փ=18մմ	տն	0.113	427.76	48.34
48	6-161 գ=1,15 գ=1,25	Միաձույլ երկ/ բետոնյա B25 բետոնից պարզունակներ գոյություն ունեցող շենքի պայմաններում	խմ	4.74	86.95	412.12
49	հ,բ	Ամրան Ա c -1	տն	0.283	437.48	123.81
50	հ,բ	Ամրան Ա -500c Փ=14-16 մմ	տն	0.323	427.76	138.17
51	8-59	Պատերի շարվացքի ամրանաորում Ա4 առանցքով	տն	0.0398	57.57	2.29
52	հ,բ	Ամրան Ա c -1	տն	0.0398	437.48	17.41
		ընդամենը				22250.64
		Թիվ2 ուսումնական մասնաշենք				
1	6-21 գ=1,15 գ=1,25	Քարաբետոն հիմքերի տակ B 10 բետոնից ներսի ժապավենային համար	խմ	128.5	37.69	4843.6
2	6-22 գ=1,15 գ=1,25	Միաձույլ ե/բետոնե B 25 դասի բետոնից ժապավենային հիմքեր գոյություն ունեցող շենքում	խմ	42.00	57.51	2415.47
3	հ,բ	Ամրան Ա c -1	տն	1.037	437.48	453.66
4	հ,բ	Ամրան Ա -500c Փ=18մմ	տն	3.303	427.76	1412.88
5	23-78	Գոյություն ունեցող ե/բետոնյա ժապավենային հիմքերի ուժեղացում միաձույլ ե/բետոնյա շապիկով B25	խմ	28.6	167.49	4790.16
6	հ,բ	Ամրան Ա c -1	տն	0.809	437.48	353.92
7	հ,բ	Ամրան Ա -500c Փ=18 մմ	տն	1.894	427.76	810.17
8	23-78	Գոյություն ունեցող ե/բետոնյա սյուների հիմքային մասի ուժեղացում միաձույլ ե/բետոնյա շապիկով B25	խմ	16.8	167.49	2813.80
9	հ,բ	Ամրան Ա -500c Փ=8 մմ	տն	0.168	437.48	73.50
10	հ,բ	Ամրան Ա -500c Փ=14 մմ	տն	0.368	427.76	157.41
11	23-79	Գոյություն ունեցող ե/բետոնյա սյուների ուժեղացում միաձույլ երկաթ բետոնյա շապիկով B25	խմ	29.6	363.74	10766.82
12	հ,բ	Ամրան Ա c -1	տն	0.692	437.48	302.73
13	հ,բ	Ամրան Ա -500c Փ=14-16 մմ	տն	0.679	427.76	290.45
14	հ,բ	Ամրան Ա -500c Փ=25 մմ	տն	0.823	427.76	352.04
15	հ,բ	Ամրան Ա -500c Փ=32 մմ	տն	1.097	427.76	469.25
16	6-145 գ=1,15 գ=1,25	Միաձույլ ե/բետոնե դիաֆրագմանե-րի պատեր B 25 դասի բետոնից 20սմ հաստությամբ գոյություն ունեցող շենքի պայմաններում	խմ	37.6	96.90	3643.49
17	հ,բ	Ամրան Ա c -1	տն	0.112	437.48	49.00
18	հ,բ	Ամրան Ա -500c Փ=14-16 մմ	տն	7.383	427.76	3158.13
19	23-125	Ակոսների փորում ե/բետոնյա կոնս-տրուկցիաներում 50սմ2 կտրվացք սյուների ամրանների բացում	մ	39.8	0.96	38.24

20	23-47	Անցքերի շաղափում քարե պատերում գայլակոնիչով 40սմ խորությամբ	100 հատ	6.2	38.41	238.17
21	23-80	Պատերի ուժեղացում երկաթ բետոնյա շապիկով B-25 մակնիշի բետոնից	խմ	64	133.91	8570.12
22	հ,բ	Ամրան Ա c -1	տն	0.100	437.48	43.75
23	հ,բ	Ամրան Ա -500c Φ=8մմ	տն	0.083	437.48	36.31
24	հ,բ	Ամրան Ա -500c Φ=10մմ	տն	1.76	435.85	767.10
25	հ,բ	Ամրան Ա -500c Φ=12մմ	տն	2.552	427.76	1091.64
26	OOO verakan	Պատերի անցքերի լցնում պոլիմեր շաղախով	կգ	32.5	4.10	133.32
27	26-107 26-111	Պատերի ուժեղացում տերկրետ բետոնով 70մմ հաստությամբ	քմ	183.00	8.13	1487.46
28	15-304	Մետաղական ցանցի և խարսխային ամրանների տեղադրում	100 քմ	1.83	27.27	49.91
29	շուկ	Ամրան 3Bp-1	տն	0.141	605.66	85.40
30	շուկ	Ամրան Ա -500c Φ=8 մմ	տն	0.190	437.48	83.12
31	շուկ	Ամրան Ա -500c Φ=10 մմ	տն	0.228	435.85	99.37
32	23-82	Երկաթ բետոնյա ծածկերի ուժեղացում վերևվից B-25 բետոնից	խմ	56.2	91.03	5116.03
33	հ,բ	Ամրան Ա c -1	տն	2.868	437.48	1254.68
34	23-115 գ=0,4	անցքերի փորում հին ե/բետոնյա ծածկերի մեջ 100x50մմ	100 հտ	12.4	35.98	446.15
35	23-102	Գոյություն ունեցող միջուկների ամրանների բացում	խմ	0.2	60.43	12.09
36	6-106 գ=1,15 գ=1,25	Միաձույլ ե/բետոնյա աճեցվող միջուկներ բմ-25 բետոնից դահլիճի ծածկի համար	մ3	2.0	98.83	197.66
37	շուկ	ամրան Ա-1	տն	0.04	437.48	17.50
38	շուկ	Ամրան Ա -500c Φ=18 մմ	տն	0.182	427.76	77.85
39	6-161 գ=1,15 գ=1,25	Միաձույլ ե/բետոնյա պարզունակներ B25 բետոնից գոյություն ունեցող շենքի պայմաններում դահլիճի ծածկի համար	խմ	15.80	86.95	1373.74
40	հ,բ	Ամրան Ա c -1	տն	0.845	437.48	369.67
41	հ,բ	Ամրան Ա -500c Φ=14-18 մմ	տն	0.866	427.76	370.44
42	հ,բ	Ամրան Ա -500c Φ=22-28 մմ	տն	1.469	427.76	628.38
